# ԿԱՐԵԼ ՉԱՊԵԿԻ «ՄԱՅՐԸ»ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԴԵՐԱՍԱՆՆԵՐԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՆ ՈՒՆԵՑԵԼ ԱրՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ



***Փետրվարի 5-ին, ԱրՊՀ են այցելել Հայաստանի մշակութային հիմնադրամի տնօրեն Մանուկ Նիգոյանը, ՀՀ վաստակավոր արտիստ Լալա Մնացականյանը, ՀՀ մի խումբ դերասաններ և հանդիպում ունեցել ուսանողության հետ:***

Հանդիպմանը հյուրերին ողջունել և Արցախի մայր բուհ այցելելու համար շնորհակալություն է հայտնել ԱրՊՀ ՈՒՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը:

ՀՀ վաստակավոր արտիստ Լալա Մնացականյանը, ողջունելով համալսարանականներին, խոստովանել է, որ Արցախն իր համար առանձնահատուկ նշանակություն ունի և ամեն անգամ Արցախ այցելելով` հուզվում է այնպես, ինչպես մարդ հուզվում է, երբ երկար ժամանակ չի տեսել իր հարազատներին: Մանրամասնելով Արցախ այցելելու նպատակը` նշել է, որ այս անգամ առիթը Կարել Չապեկի «Մայրը» ներկայացումն է, որը բեմադրվելու է փետրվարի 6-ին և 7-ին: Պիեսի բեմադրողը և գլխավոր դերում Լալա Մնացականյանն է: Նրա խոսքով` ներկայացումը արծարծած գաղափարով «Ոչ» է ասում պատերազմներին և «Այո»` խաղաղությանը:

«Այս ներկայացումը ապրելու մասին է: Այն սովորեցնում է ապրել, ապրեցնող է իր արծարծած խնդիրներով, գաղափարով: Չնայած մայրը կորցնում է իր զավակներին, բայց շարունակում է պայքարել ու ապրել: Այն ժողովուրդը, ով տեր չի կանգնի իր անցյալին, իր հերոսներին, նա կորստյան կմատնվի»,- ասում է նա և հավելում, որ պիեսը շոշափում է համամարդկային արժեքներ:

# ՀԱՆԴԻՊՈՒՄ ԾԱՆՐԱՄԱՐՏՈՒՀԻ ՆԱԶԻԿ ԱՎԴԱԼՅԱՆԻ ՀԵՏ



***Փետրվարի 26-ին ԱրՊՀ-ում հյուրընկալվել և ուսանողների հետ հանդիպում է ունեցել ծանրամարտի աշխարհի չեմպիոն Նազիկ Ավդալյանը: Հանդիպման նախաձեռնողները ԱրՊՀ ՖԴ և ՆԶՊ ամբիոնն ու պատմաիրավագիտական ֆակուլտետի ՈՒԽ-ն են:***

Ողջունելով Ն. Ավդալյանի այցն Արցախի մայր բուհ` ԱրՊՀ պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը ներկայացրել է չեմպիոնի անցած ուղին և նվաճումները: Պրոռեկտորը միաժամանակ շնորհակալություն է հայտնել նրան ուղեկցող, Արցախի ծանրամարտի ֆեդերացիայի նախագահ Արթուր Շիրինյանին` ԱրՊՀ հետ համագործակցելու համար:

Նազիկ Ավդալյանին ողջունել և սպորտում ունեցած նրա ավանդը գնահատել, հարցեր են ուղղել հանդիպմանը ներկա դասախոսներն ու ուսանողները: Ծավալված անկեղծ հարցուպատասխանների միջոցով ծանրամարտուհին պատմել է իր անցած ուղու, դժվարությունների և հաջողությունների, հոգեբանական արգելքների մասին` ուսանողներին հորդորելով անշեղորեն գնալ երազանքի ետևից:

Արցախի ծանրամարտի ֆեդերացիայի հրավերով Ն. Ավդալյանն այս անգամ արդեն մարզչի կարգավիճակով ծանրամարտն Արցախում զարգացնելու առաքելությամբ է մեր հանրապետությունում:

«Ծանրամարտն այն սպորտաձևն է, որի զարգացումն Արցախում հնարավոր է, միայն թե մասսայականացման խնդիր պետք է դրվի: Ես պատրաստ եմ ամեն ինչ անել, որպեսզի Արցախում զարգանա ծանրամարտը: Այստեղ կան երեխաներ, որոնք կարող են աշխարհահռչակ մարզիկներ դառնալ: Հեռու չէ այն օրը, երբ Արցախը աշխարհի չեմպիոններ կտա», -ասել է նա` հավելելով, որ Արցախը պետք է աշխարհին ճանաչելի դառնա նաև սպորտով:

Իսկ թե ինչ է անհրաժեշտ ծանրամարտով զբաղվելու համար, մանրամասնում է ծանրամարտուհին. «Կամային որակներ, տեխնիկա, աշխատասիրություն և ֆիզիկական տվյալներ»:




«ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ամսաթերթ

Հիմնադիր` «ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ

Հրատարակվում է 1994 թվականից

Խմբագիր` Զարինե Սառաջյան

Մեր հասցեն` Մ.Գոշի 5: Հեռ.` (047) 94 04 91

Տպաքանակ` 400

Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում

Իմացի՛ր քո համալսարանի մասին:

Այցելի՛ր asu.am կայք:

www.asu.am



# ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄՍԱԹԵՐԹ - ЕЖЕМЕСЯЧНАЯ ГАЗЕТА «АРЦАХИ АМАЛСАРАН»

№ 01(215)
հունվար-փետրվար, 2019


# ԿԱՅԱՑԵԼ Է ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ. ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ Է ԱՐԺԱՆԱՑԵԼ ԱրՊՀ ՊՈԱԿ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ



***Փետրվարի 27-ին կայացած գիտական խորհրդի նիստում հավանության է արժանացել ԱրՊՀ ՊՈԱԿ զարգացման ռազմավարական ծրագիրը, ի գիտություն ընդունվել մագիստրատուրայի և ասպիրանտուրայի 2019-2020 ուսումնական տարվա մասնագիտությունների և կրթական ծրագրերի ցանկը, 2018 թ. ֆինանսական տարվա հաշվետվությունն ու 2019թ. նախահաշվի նախագիծը, տպագրության երաշխավորվել մի շարք գիտական աշխատանքներ:***

Օրակարգային առաջին հարցը, որը վերաբերում էր ԱրՊՀ ՊՈԱԿ զարգացման ռազմավարական ծրագրին, ներկայացրել է ռեկտոր Արմեն Սարգսյանը` նշելով, որ նախորդ տարվա մարտ ամսին գիտխորհրդի կողմից հաստատված ռազմավարական ծրագիրը վերանայվել է և, առաջարկվող փոփոխությունների ծավալով պայմանավորված, որոշվել հաստատել նոր ծրագիր:

«Մոնիթորինգի և դրա արդյունքների քննարկման արդյունքում նպատակահարմար ենք գտել անել այն, ինչ ճիշտ է և ինչ կարող ենք անել: Այսինքն` սինգապուրյան օրինակով մենք հանդես ենք գալիս որպես սովորող կազմակերպություն»,- նշել է ռեկտորը:

Նիստին ներկա ԿԳՍ նախարար Նարինե Աղաբալյանը նշել է, որ առաջին անգամ փորձ է արվում կրթության երկարատև պլանավորում իրականացնել, որի հիմքում պետք է դրվեն իրատեսական հնարավորություններ. «Զարգացումը ենթադրում է ճկունություն, հետևապես երկարատև պլանավորումը պետք է ներառի այդպիսի քաղաքականության հնարավորություն: Ասել է թե` սկզբունքը` իրատեսական, ինչը, սակայն, չպետք է կաշկանդի մեր ցանկություններն ու երազանքները»:

ԱրՊՀ ռազմավարական ծրագիրն արժանացավ գիտխորհրդի հավանությանը, որն առաջիկայում կներկայացվի ԱրՊՀ խորհրդի 2019թ. մարտի 5-ին կայանալիք նիստի հաստատմանը:

Հաջորդիվ գիտխորհուրդը լսեց և ի գիտություն ընդունեց ԱրՊՀ 2018թ. ֆինանսական տարվա հաշվետվությունն ու 2019թ. նախահաշվի նախագիծը, 2018-2019 ուսումնական տարվա մագիստրոսական թեզերի /հեռակա ուսուցման/ պաշտպանության արդյունքները, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի 2019-2020 ուսումնական տարվա մասնագիտությունների և կրթական ծրագրերի ցանկը, ԳԽ կից գործող մշտական հանձնաժողովների կազմը:

Նիստին ԱրՊՀ ռեկտորը նաև ամփոփ տեղեկություն է ներկայացրել ԱրՊՀ գիտական տեղեկագրի մասին, որն ընդգրկվել է ՀՀ ԲՈՀ-ի «Ընդունելի հանդեսների պարբերականներ-2018» բաժնի տարեգրքերի շարքում:

Այլ հարցերում քննարկվել և տպագրության են երաշխավորվել մի շարք գիտական աշխատանքներ:

# Հ Ա Ր Գ Ա Ն Ք Ի Տ Ո Ւ Ր Ք

***Փետրվարի 28-ին ԱրՊՀ պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողությունը հարգանքի տուրք են մատուցել սումգայիթյան եղեռնագործության զոհերի հիշատակին` ծաղիկներ խոնարհելով նրանց հիշատակը հավերժացնող հուշակոթողին:***

1988 թվականի փետրվարի 26-29-ը ադրբեջանական իշխանությունների կողմից և ԽՍՀՄ ղեկավարության թողտվությամբ Ադրբեջանական ԽՍՀ Սումգայիթ քաղաքում տեղի են ունեցել հայերի զանգվածային ջարդեր, որոնք իրենց վայրենի ու դաժան կատարմամբ ցնցել են համաշխարհային հանրությանը: Երեք օր շարունակվող սպանդի արդյունքները զարհուրելի էին, ջարդարարների գործողությունները` անօրինակ դաժան. ԽՍՀՄ պաշտոնական տվյալներով մի քանի տասնյակ, իսկ ոչ պաշտոնական` հազարից ավելի սպանվածներ, հազարավոր վիրավորներ: Հիշում ենք և դատապարտում:

# ԳՐՈՂ, ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍ ԶՈՐԻ ԲԱԼԱՅԱՆՆ ԱՅՑԵԼԵԼ Է ԱրՊՀ

*Փետրվարի 13-ին ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանն ընդունել է գրող, հրապարակախոս, հասարակական և քաղաքական գործիչ Զորի Բալայանին և լրագրող Կարեն Զաքարյանին: Քննարկվել են ուսումնական գործընթացին առնչվող հարցեր: Հանդիպմանը մասնակցում էր նաև համալսարանի ղեկավարությունը:*



Շնորհակալություն հայտնելով հյուրերին Արցախի պետական համալսարան այցելելու համար՝ ռեկտորը կարևորել է Զորի Բալայանի հայանպաստ գործունեությունը հատկապես Արցախյան շարժման, ազգային-ազատագրական պայքարի տարիներին, Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորմանն ուղղված նրա ջանքերը:

Ռեկտորը ներկայացրել է նաև համալսարանի գիտակրթական ներկա գործընթացը, առկա խնդիրներն ու նախանշված ծրագրերը, որոնք ուղղված են համալսարանի գործունեության բոլոր ուղղություններով արդյունավետության բարձրացմանը:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար՝ Զ. Բալայանը կարևորել է կրթության և գիտության դերը, Արցախի մայր բուհի գործունեությունը՝ ընդգծելով հատկապես բուհերում լեզուների ուսուցման անհրաժեշտությունը:

Հանդիպմանը ձեռք է բերվել նաև նախնական պայմանավորվածություն՝ առաջիկայում ընդլայնված կազմով հանդիպման համար: Զ. Բալայանն իր գրքերն է նվիրել Արցախի պետական համալսարանին: ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանն էլ իր հեղինակային գրքերից է նվիրել հյուրերին:

Հանդիպումից հետո հյուրերը ԱրՊՀ ուսանողների հետ մասնակցել են Տյառնընդառաջի տոնին նվիրված միջոցառմանը:

# ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ



*Փետրվարի 11-ին ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը հանդիպում է ունեցել ուսանողական կառույցների ներկայացուցիչների հետ, քննարկել ընթացիկ և նախատեսվող մի շարք աշխատանքներ:*

Կարևորելով ուսանողության հետ պարբերական հանդիպումների անհրաժեշտությունը՝ ռեկտոր Արմեն Սարգսյանը նշել է, որ այդպիսիք հնարավորություն են տալիս անմիջական շփումներում վերհանել խնդիրներն ու դրանց լուծման արդյունավետ ուղիները:

Ուսանողական ակտիվին համալսարանական ներկա և նախատեսվող գործընթացների մասին ամփոփ տեղեկատվություն տրամադրելուն զուգահեռ՝ ռեկտորը շեշտադրել է համալսարանական առկա պոտենցիալը, որը պարարտ հող է բուհի հետագա հաջողությունների համար:

«Նախորդ տարիներին տարբեր ուղղություններով համալսարանում իրականացված աշխատանքների ծավալը թույլ է տալիս ասելու, որ առկա են բոլոր հիմքերը մայր բուհի հետագա հաջողությունների համար, որում իր ներդրումը պետք է ունենա նաև ուսանողությունը, ում վերապահված է բավականաչափ դերակատարություն նաև կառավարման մարմիններում»,- ասել է ռեկտորը՝ հորդորելով ակտիվորեն մասնակցել համալսարանական գործընթացներին:

Ընթացիկ աշխատանքներից Ա. Սարգսյանն առանձնացրել է ուսումնական գործընթացում նախատեսվող վերանայումները, հավատարմագրման գործընթացը, կադրային նոր քաղաքականության ձևավորումը, գլխավոր մասնաշենքի շինարարության ընթացքը և այլն:

Ռեկտորը պատասխանել է նաև ուսանողների հարցերին, լսել նրանց մտահոգություններն ու առաջարկությունները:

ԱրՊՀ ՈՒՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը նշել է, որ նմանատիպ հանդիպումներն ապահովում են ուսումնադաստիարակչական և գիտակրթական գործընթացի ռիթմն ու տրամաբանությունը, բարձրացնում արդյունավետությունը:



# ԱրՊՀ-ՈՒՄ ԳՈՐԾՈՒՄ Է «ԵՍ ԿԱՄԱՎՈՐ ԵՄ» ԾՐԱԳԻՐԸ

*ԱրՊՀ-ում գործում է «Ես կամավոր եմ» ծրագիրը և համանուն խումբ, որի հիմնական առաքելությունը կամավորության սկզբունքով հանրօգուտ աշխատանքներ իրականացնելն է:*



«Նման ծրագիր իրականացնելու մտահղացում վաղուց կար, և ԱրՊՀ ուսանողները պարբերաբար ընդգրկվում էին կամավորական տարաբնույթ աշխատանքներում, սակայն այդ ամենը համակարգելու անհրաժեշտություն կար», - ասում է ԱրՊՀ ՈՒՀՏԱ և կարիերայի բաժնի պետ Կարեն Մեժլումյանը և հավելում, որ ՈՒԽ-ի հետ համատեղ որոշեցին կյանքի կոչել «Ես կամավոր եմ» ծրագիրը, որը կարճ ժամանակահատվածում իր շուրջը համախմբեց բազմաթիվ ուսանողների: Խմբում ներգրավված 50-ից ավելի ուսանողներ վերջերս այցելել են Ստեփանակերտի տուն ինտերնատ, հանդիպել տարեցների հետ, կիսել նրանց հոգսերը, ուրախության պահեր պարգևել նրանց: Նորաստեղծ խումբը հասցրել է որոշակի աջակցություն ցուցաբերել նաև «Արցախի կույրերի միավորում» հասարակական կազմակերպությանը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում Արցախի Հանրապետության պատմամշակութային կոթողների պահպանությանը և շրջակա միջավայրի խնամքին: Կամավորները բարեգործական միջոցառում են իրականացրել նաև Բերձորի երեխաների խնամքի թիվ 2 գիշերօթիկ դպրոցի սաների համար: Պատասխանատուների հավաստմամբ՝ առաջիկայում սպասվում են նոր անելիքներ: Արցախի Հանրապետությունում կայանալիք CONIFA-ի (անկախ ֆուտբոլային ասոցիացիաների կոնֆեդերացիա) հովանու ներքո անցկացվող «Եվրոպական ֆուտբոլի գավաթ 2019» մրցաշարի ժամանակ ևս ԱրՊՀ ուսանողները իրականացնելու են կամավորական աշխատանքներ:

«Մեր ուսանողները պատրաստակամ են կամավորական աշխատանքներ իրականացնելու հարցում: Սպասում ենք նաև առաջարկությունների՝ մեր օժանդակությունը ի սպաս դնելու հանրության տարբեր շերտերին, սոցիալական տարբեր խմբերի: Այսօր ամբողջ աշխարհն է կարևորում կամավորական աշխատանքների նշանակությունը, և ժամանակն է, որ յուրաքանչյուր ուսանող ևս գիտակցի դրա կարևորությունը և իր առօրյայի մաս դարձնի կամավորական աշխատանքներ իրականացնելը»,- նշում է Կարեն Մեժլումյանը:

Հավելենք, որ «Ես կամավոր եմ» խմբի անդամ կարող են դառնալ ԱրՊՀ այն ուսանողները, ովքեր պատրաստակամ են իրենց ակտիվ մասնակցությունն ունենալ հասարակական և հանրօգուտ տարբեր աշխատանքներում: Բոլոր այն ուսանողները, ովքեր ցանկություն ունեն անդամագրվելու խմբին, կարող են դիմել ՈւՀՏԱ և կարիերայի բաժին կամ ՈՒԽ: Հեռ.՝ 047-94-91-50, 097-39-90-49: Էլ.փոստ՝ asu-career@mail.ru:

# ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ ԱրՊՀ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ



*ԱրՊՀ գիտական խորհրդի որոշմամբ օրերս տպագրվել է Արցախի պետական համալսարանի գործունեությունը կարգավորող իրավական ակտերի ժողովածուն:*

Այն ընդգրկում է ԱրՊՀ գործունեությունը կարգավորող Արցախի Հանրապետության օրենքները, կառավարության որոշումները, գերատեսչական նորմատիվ ակտերը, համալսարանի գիտական խորհրդի որոշումներով հաստատված կարգերը, կանոնակարգերը, ընթացակարգերը, աշխատակարգերը, ներքին կանոնադրությունները՝ համապատասխան լրացումներով և փոփոխություններով:

Ժողովածուն բաղկացած է չորս բաժիններից: Առաջին բաժինը ներառում է «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Լեզվի մասին» ԼՂՀ օրենքները:

Երկրորդ բաժնում զետեղված են Արցախի Հանրապետության կառավարության այն որոշումները, որոնք վերաբերում են բարձրագույն կրթության ոլորտին, երրորդ բաժնում՝ գերատեսչական նորմատիվ ակտերը, չորրորդում՝ ԱրՊՀ գիտական խորհրդի որոշումները:

Ժողովածուն կազմել են ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանն ու միջազգային համագործակցության գծով մասնագետ Նանա Առուստամյանը:

# ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՊԱՏԳԱՄՆԵՐՆ ԱՅՍՕՐ ԷԼ ԱՐԴԻԱԿԱՆ ԵՆ

*Փետրվարի 20-ին բանասիրական ֆակուլտետում կայացավ Հովհաննես Թումանյանի 150 -ամյակին նվիրված հերթական գրական-գեղարվեստական ցերեկույթը:*



Հայոց լեզու և գրականություն մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողների նախաձեռնությամբ կազմակերպված ցերեկույթի ընթացքում վերարժևորվեց Թումանյան երևույթը, նրա տեղն ու դերը հայ գրականության պատմության համատեքստում:

«Թումանյանի կյանքի և ստեղծագործության բազմաթիվ դրվագների համադրմամբ նպատակ ունենք հերթական անգամ արժևորելու մեր ազգային ժառանգությունն ու պատշաճ մեկնաբանությամբ փոխանցել սերունդներին, որոնց կրթելու առաքելությունն ենք ստանձնել»,- ասել է ուսանողուհի Սոնա Մուսայելյանը:

Ուսանողների նախաձեռնությունը ողջունեցին և գնահատեցին գրականության և լրագրության ամբիոնի դասախոսները:

«Այսօր հերթական անգամ մեզ համոզեցիք, որ ի դեմս ձեզ՝ մենք կունենանք հուսալի մանկավարժներ, գրականագետներ և լեզվաբաններ, ովքեր ըստ էության են ընկալել ամենայն հայոց բանաստեղծին ու նրա ստեղծագործութունը»,- նշել է ամբիոնի պրոֆեսոր Անահիտ Աթայանը:

# ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ ՕՐ ԱրՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ



*Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակի առթիվ ԱրՊՀ գիտական գրադարանում կազմակերպվել է միջոցառում: Ողջունելով ներկաներին՝ գրադարանի վարիչ Հասմիկ Հարությունյանը շնորհավորել է Հ. Թումանյանի 150-ամյակի առթիվ՝ նշելով, որ օրը առիթ է՝ ընթերցողին մերձեցնելու գրքի, ընթերցանության հետ:*

Միջոցառման ընթացքում բանասիրական ֆակուլտետի ակտիվ ուսանողներն ասմունքել են Ամենայն հայոց բանաստեղծի նշանավոր ստեղծագործություններից, ներկայացրել նրա ծավալված գրական-հասարակական գործունեությունը, մեջբերել նշանավոր գրողների կարծիքները՝ Հովհաննես Թումանյանի մասին:

Միջոցառմանը մասնակցում էին նաև ԱրՊՀ ՈՒՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը, բ.գ.թ., դոցենտ Զինաիդա Բալայանը, բ.գ.թ. Զարինե Սառաջյանը, ովքեր, կարևորելով տոնը, արժևորել են Հովհաննես Թումանյան գրողի ստեղծագործությունները, դրանք մշտապես ընթերցելու անհրաժեշտությունը:



# ԱրՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՀԱՂԹՈՂ ԵՆ ՃԱՆԱՉՎԵԼ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՄՐՑՈՒՅԹՈՒՄ

*Արդեն մի քանի տարի է՝ ՀՀ կենտրոնական բանկը հայտարարում է մրցույթ բարձր առաջադիմությամբ ուսանողներին Իսահակ Իսահակյանի անվան կրթաթոշակ նշանակելու համար: Մրցույթին մասնակցել են նաև ԱրՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողներ և ճանաչվել հաղթող՝ արժանանալով Ի. Իսահակյանի անվան 6-ամսյա կրթաթոշակի:*







Մրցույթը հայտարարվել էր Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման, մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետների, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Հայաստանի ամերիկյան համալսարանի «Տնտեսագիտության մագիստրոս» ծրագրի և Արցախի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողների համար:

Մրցույթին ԱրՊՀ-ից մասնակցել է հինգ ուսանող՝ ներկայացնելով վերլուծական-հետազոտական աշխատանք: Հաղթող է ճանաչվել «Կառավարում» մասնագիտացմամբ մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանողուհի Յանա Իսախանյանը՝ «Ներդրումների ճյուղային կառուցվածքի ռեգրեսիոն վերլուծությունը» թեմայով (ղեկավար՝ տ.գ.թ., դոցենտ Ռ. Մանգասարյան), ֆինանսներ 4-րդ կուրսի ուսանողուհի Անահիտ Մխիթարյանը՝ «Կյանքի որակի գնահատման բաղադրյալ ցուցանիշները» թեմայով (ղեկավար՝ տ.գ.թ., դոցենտ Ռ. Մանգասարյան), ֆինանսներ 4-րդ կուրսի ուսանողուհի Անգելինա Նասիբյանը՝ «Մակրոպրուդենցիալ քաղաքականությունը» (ղեկավար՝ տ.գ.թ., դոցենտ Ն. Ավանեսյան):

Տնտեսագիտության ֆակուլտետի դեկան, տ.գ.թ., դոցենտ Ռուզաննա Մանգասարյանը հպարտությամբ է նշում, որ յուրաքանչյուր տարի տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողները մասնակցում են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հայտարարված մրցույթին և միշտ էլ հաղթանակ են արձանագրում. «Այսպիսի մրցույթների արդյունքները ևս մեկ անգամ փաստում են, որ ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը լավ է աշխատում, և մեր ուսանողներն իրենց մասնագիտական գիտելիքներով չեն զիջում այլ բուհերում սովորող ուսանողներին: Հպարտ ենք նաև, որ մեր ուսանողները Արցախի պետական համալսարանի անունը բարձր են պահում միջբուհական տարբեր մրցույթներում»:

Հավելենք, որ «Իսահակ Իսահակյանի անվան կրթաթոշակի» մրցույթն անցկացվում է 2003 թ.-ից սկսած: ԿԲ խորհուրդն ամսական 50.000 դրամի չափով, 6 ամիս ժամկետով Իսահակ Իսահակյանի անվան կրթաթոշակ է սահմանում հաղթող ճանաչված ուսանողների համար:

# ՀԵՌԱԿԱ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԲՈՒՀԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ԵՆ



*Հունվարի 9-ին ԱրՊՀ ՈւՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը հանդիպում է ունեցել հեռակա ուսուցման համակարգի առաջին կուրսի ուսանողների հետ:*

Հանդիպման ընթացքում պրոռեկտորը ներկայացրել է մայր բուհի կայացման պատմական ընթացքը, անդրադարձել ուսումնական գործընթացին, ուսանողության իրավունքներին և պարտականություններին՝ ուղղորդելով նրանց առաջնորդվել համալսարանում գործող կարգերով:

«Այսպիսի հանդիպում-քննարկումներով մենք հերթական անգամ ընդգծում ենք, որ առկա և հեռակա համակարգում սովորող ուսանողների համար ստեղծված են հավասար պայմաններ»,- ասել է պրոռեկտորը:

Այնուհետև նա ուսանողների հետ քննարկել է հարցեր, որոնց հետ վերջիններս առնչվում են ուսումնառության ընթացքում:

# ՇՆՈՐՀԱՎՈ՛Ր ՏՈՆԴ, ՀԱՅՈ՛Ց ԲԱՆԱԿ



*Հունվարի 28-ը նշվում է որպես Հայոց բանակի օր: Օրվա առթիվ ԱրՊՀ մի խումբ ուսանողներ այցելել են սահմանամերձ Մեխակավանի զորամաս՝ զինվորների հետ նրանց օրը տոն դարձնելու նպատակով: Այցի ընթացքում ուսանողները զորամասում հանդես են եկել հայրենասիրական կատարումներով, կազմակերպել ինտելեկտուալ խաղ, որտեղ զինվորների հետ իրենց ինտելեկտուալ ուժերն են փորձել նաև ուսանողները:*

Օրվա միջոցառումները մեկնարկել են խորհրդանշական մոմավառությամբ զորամասի Զորավոր Սուրբ Աստվածածին եկեղեցում, որտեղ ուսանողներն ու զինվորները աղոթել են խաղաղության համար: Շնորհավորանքների և բարեմաղթանքների հասցեատերերը զինվորներն էին, ովքեր, սակայն, չմոռացան իրենց փորձով, ռազմական հմտություններով ու գիտելիքներով կիսվել ուսանողների հետ: Զինծառայողների ուղեկցությամբ ուսանողները ծանոթացել են բանակային առօրյային, ճաշել զինվորների հետ:

«Օրը հիշարժան դարձավ բոլորիս համար: Հայ զինվորի կողքին լինելով և նրա դեմքին ժպիտ տեսնելով՝ մենք՝ ուսանողներս, անչափ ուրախ էինք ու ոգևորված: Մենք հոգեպես միշտ մեր զինվորների հետ ենք, հպարտությամբ սպասում ենք բոլորի հաղթական վերադարձին: Մեր աղոթքները հայ զինվորի անփորձանք ծառայության համար են»,- ասել է բանասիրական ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահ Լիլիթ Մարգարյանը:

Մանկավարժության և սպորտի ֆակուլտետի ՈՒԽ նախագահ Ռիմմա Մանգասարյանն էլ նշել է, որ զորամաս այցելելու և զինվորների հետ համատեղ միջոցառումներ կազմակերպելու առաջարկին միշտ էլ ուսանողները մեծ սիրով են ընդառաջում, և այսպիսի միջոցառումները ամենահետաքրքիրն ու սպասվածն են թե՛ ուսանողների և թե՛ զինվորների համար. «Մեզ հաջողվեց զինվորների օրը դարձնել տոնական. սա էր մեր ամենակարևոր նպատակը»:

Օրվա ավարտին համալսարանի կողմից պատվոգրերով և նվերներով պարգևատրվեցին ինտելեկտուալ խաղի հաղթող ու մասնակից զինվորները, իսկ ակտիվ ուսանողները զորամասի կողմից արժանացան պատվոգրերի՝ բանակ-հասարակություն կապն ամրապնդելու համար:

«ԱրՊՀ ՈՒՀՏԱ և կարիերայի բաժինը, ինչպես նաև ուսանողական խորհուրդը, կարևորելով բանակ-հասարակություն կապի ամրապնդումը, հաճախակի են կյանքի կոչում նմանատիպ ծրագրեր՝ մշտապես ուշադրության առանցքում պահելով հայոց բանակն ու զինվորին: Ջերմորեն շնորհավորում ենք բոլորիս՝ Հայոց բանակի օրվա առթիվ, մաղթում շարունական հաղթանակներ մեր ժողովրդին, անպարտելի ուժ և կորով մեր զինվորներին: Մենք միշտ նրանց կողքին ենք»,- ասել է ԱրՊՀ հանրային միջոցառումների կազմակերպիչ Վահե Գալոյանը:





# ԳԻՐՔ ՆՎԻՐԵԼՈՒ ՏՈՆԸ՝ ԱրՊՀ-ՈՒՄ



*ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ գրքեր են նվիրվել ուսանողներին: Նախաձեռնության հեղինակը բանասիրական ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահ Լիլիթ Մարգարյանն է, ում խոսքով, օրը առիթ է՝ ևս մեկ անգամ արժևորելու գիրքը, նրա նշանակությունը:*

«Թեպետ տեխնոլոգիաների զարգացումը իր ազդեցությունն է ունենում գիրք ընթերցելու գործընթացի վրա, այնուամենայնիվ, ընթերցասերը միշտ էլ գիտի գնահատել գրքի արժեքը: Այսօր կան ընթերցասեր ուսանողներ, որոնց համար գիրք նվիրելու օրը իսկական տոն է: Շնորհավորում եմ բոլոր ընթերցասերներին տոնի, ինչպես նաև Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյա հոբելյանի առթիվ և մաղթում միշտ գիտակցել գրքի արժեքն ու նշանակությունը»,-ասում է հայոց լեզու և գրականություն 3-րդ կուրսի ուսանողուհի, ՈՒԽ նախագահ Լիլիթ Մարգարյանը:

# ԳԻՐՔԸ՝ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՎ ԳԻՏԵԼԻՔԻ ԿՈՒՏԱԿՄԱՆ ԻՐԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐ



*Փետրվար ամսում ԱրՊՀ-ում շարունակվել են միջոցառումները՝ նվիրված մեծանուն գրող, ազգային և հասարակական գործիչ Հովհաննես Թումանյանի ծննդյան 150- ամյակին: Այս անգամ միջոցառման նախաձեռնողները տնտեսագիտության ֆակուլտետի զբոսաշրջության մասնագիտությամբ սովորող ուսանողներն էին: Միջոցառման ընթացքում ուսանողները հանդես են եկել ասմունքով, պարային կատարմամբ:*

«Չնայած մենք ապրում ենք 21-րդ դարում, որտեղ տիրում է համացանցի գերիշխանությունը, սակայն չի կարելի ասել, որ գիրքը կորցրել է իր արժեքը, ավելին՝ գնալով նորից բարձրանում է գրքի նշանակությունը մեր հասարակության մեջ»,- ասել է ուսանողուհի Անի Հայրապետյանը՝ ընդգծելով, որ գիրքը մարդու ընկերն է, իսկ ընկերներին պետք է կարողանալ ընտրել:

Տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Ռուզաննա Մանգասարյանը, շնորհակալություն հայտնելով ուսանողներին միջոցառումը կազմակերպելու համար, նշել է. «Պատահական չէ, որ հենց Հովհաննես Թումանյանի ծննդյան օրն է նշվում գիրք նվիրելու օրը: Գիրքը մարդու ամենալավ, ամենահավատարիմ ընկերն է, որի միջոցով ստանում ենք գիտելիք, իսկ գիտելիքը ամենակարևոր ուժն է: Եթե ունես գիտելիք, ապա ունես արժևորման ճիշտ համակարգ, կարողանում ես ինքնահաստատվել, ինքնաքննադատել»: Նա նաև նշել է, որ այսօրվա երիտասարդները տեղեկատվությունը ստանում են հիմնականում համացանցից, և այս միջոցառմամբ փորձել են նրանց ուշադրությունը սևեռել դեպի տեղեկատվության ձեռքբերման և գիտելիքի կուտակման իրական աղբյուրը:

Ռ. Մանգասարյանը նաև կոչ է արել ուսանողներին միշտ ընթերցել նշանավոր գրողների ստեղծագործությունները:

Հետևելով օրվա խորհրդին՝ ուսանողները միմյանց գրքեր են նվիրել:

# ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ը ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ ՕՐՆ Է

## ԿԱ ՄԵԾԱՐԵՆՑ, ԿԱ ՏԵՐՅԱՆ, ԵՎ ԲԱԶՈՒՄ ՈՒՐԻՇ ՊՈԵՏՆԵՐ ԿԱՆ, ԲԱՅՑ ԹՈՒՄԱՆՅԱՆՆ Է ԱՆՀԱՍ ԱՐԱՐԱՏԸ ՄԵՐ ՆՈՐ ՔԵՐԹՈՒԹՅԱՆ:

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

*Փետրվարի 19-ին լրացավ Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակը: Օրը նշանավորվում է նաև որպես գիրք նվիրելու տոն: ԱրՊՀ-ում կազմակերպվել են մի շարք միջոցառումներ՝ նվիրված գիրք նվիրելու տոնին և մեծ բանաստեղծի հոբելյանին:*




*Հեյ՜, ագահ մարդ, հե՜յ ,անգոհ մարդ, միտքըդ երկար, կյանքըդ կարճ,*
*Քանի՜ քանիսն անցան քեզ պես, քեզնից առաջ, քո առաջ.*
*Ի՞նչ են տարել նըրանք կյանքից, թե ինչ տանես դու քեզ հետ,*
*Խաղաղ անցիր, ուրախ անցիր երկու օրվան էս ճամփեդ:*

# ԱրՊՀ-ՈՒՄ ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ ՇՈՒՆՉՆ ԷՐ ԹԵՎԱԾՈՒՄ

***Փետրվարի 27-ին բանասիրական ֆակուլտետում թումանյանական հերթական տոնն էր, այս անգամ՝ «Դպրատուն» գրական-ուսանողական խմբակի նախաձեռնությամբ և մասնակցությամբ:***







Դպրատան խմբագիր, գրականության և լրագրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Զինաիդա Բալայանի նախաձեռնությամբ ֆակուլտետի տարբեր բաժինների ուսանողներ տարբեր լեզուներով ներկայացրել են Թումանյանի բանաստեղծության գեղագիտությունը, համեմել դրանք երգ ու պարով, բեմադրությամբ:

Օրը մեկնարկել է թումանյանական շնչով. ուսանողները Թումանյանի հերոսների կերպավորմամբ շրջել են համալսարանի ստորաբաժանումներով, կուրսերով, ասմունքել Մեծ լոռեցու գործերից և գրքեր նվիրել համալսարանականներին:

Հովհաննես Թումանյանի գրական ժառանգությունն արժևորող ելույթ է ունեցել Զ. Բալայանը և գրքեր նվիրել միջոցառման մասնակիցներին՝ հորդորելով միշտ հավատարիմ մնալ Ամենայն հայոց բանաստեղծի պատգամներին՝ խոսքով և գործով:

Բանասիրական ֆակուլտետի դեկան, բ.գ.թ., դոցենտ Լուսինե Մարգարյանը շնորհակալություն է հայտնել միջոցառման կազմակերպիչներին և մասնակից ուսանողներին:



Բանակ-հասարակություն կապ

# ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՀԱՄԵՐԳ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅՐԵՆՅԱՑ ՊԱՇՏՊԱՆԻ ՕՐՎԱՆ



***Հունվարի 24-ին ԱրՊՀ նախաձեռնությամբ Ստեփանակերտի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնում կազմակերպվել է համերգ՝ նվիրված Հայրենյաց պաշտպանի տոնին, որին ներկա էին ԱրՊՀ հեռակա և առկա համակարգում սովորող ուսանողներ, զինվորներ:***

ԱրՊՀ ՈՒՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը, ողջունելով միջոցառման ներկաներին, շնորհավորական խոսք է ասել հայոց բանակի կազմավորման 27-րդ տարեդարձի և հայրենյաց պաշտպանի օրվա առթիվ: Նա կարևորել է հայրենյաց պաշտպանների հայրենանվեր առաքելությունը Արցախի պաշտպանության սուրբ գործում:

«Քանի որ առկա համակարգում սովորող ուսանողները գտնվում են արձակուրդում, ուստի այս միջոցառման կազմակերպման նպատակն էր ընդգրկել նաև հեռակա համակարգում սովորող ուսանողներին, նրանց ուսումնական գործընթացը դարձնել ավելի հետաքրքիր, բովանդակալից և մշակութաժամանցային ծրագրերով հագեցած»,-ասել է Վ. Յարամիշյանը:

ԱրՊՀ ՈՒՀՏԱ և կարիերայի բաժնի և ուսանողական խորհրդի համատեղությամբ կազմակերպված միջոցառմանը հայրենասիրական, ազգագրական կատարումներով հանդես են եկել ԱրՊՀ ուսանողները և ՊԲ «Ասպետ» համույթը:

Վերջում պրոռեկտորը շնորհակալագրեր է հանձնել «Ասպետ» համույթի տղաներին և Ստեփանակերտի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնի տնօրեն Արմեն Հովսեփյանին՝ Հայրենյաց պաշտպանի օրվան նվիրված միջոցառմանը աջակցելու համար:

Հիշեցնենք, որ ԱՀ Ազգային ժողովը փոփոխություն է կատարել «ԼՂՀ տոների և հիշատակի օրերի մասին» ԼՂՀ օրենքում. այսուհետ հունվարի 28-ը կնշվի նաև որպես Հայրենյաց պաշտպանի օր: Նախկինում նշվում էր փետրվարի 23-ին, որը կապված էր խորհրդային բանակի հետ:

# Ա Յ Ց Ե Լ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն  Զ Ո Ր Ա Մ Ա Ս



***ԱրՊՀ մանկավարժության և սպորտի ֆակուլտետի ուսանողներն այցելել են Արցախի ՊԲ զորամասերից մեկը, հանդիպել սպա-հոգեբանների և զինվորների հետ:***

Հանդիպմանը մասնակցում էին ԱրՊՀ ՈՒՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը, մանկավարժության և սպորտի ֆակուլտետի մեթոդիստ Սերգեյ Ոսկանյանը: Սպա հոգեբանները ուսանողներին մանրամասն ծանոթացրել են զորամասում գործող հոգեբանական օգնության կենտրոնի աշխատանքներին և բաժիններին:

Ուսանողները ոգեշնչել են զինվորներին՝ ընդգծելով, որ հարկ եղած դեպքում իրենք պատրաստ են զենք վերցնել ու կանգնել նրանց կողքին:

«Մեր ուսանողների հետ հաճախակի ենք այցելում տարբեր զորամասեր: Այդպիսի այցերը արդյունավետ են երկուստեք. թե՛ զինվորների համար և թե՛ ուսանողների համար: Ուսանողները ծանոթանում են զորամասի առօրյային, հաղորդակցվում զինվորների հետ, ձեռք բերում անհրաժեշտ գիտելիքներ: Այս այցելության առիթը հոգեբանական աջակցության նրբություններին ծանոթանալն էր հենց տեղում՝ զորամասի հոգեբանական կենտրոնում, որին ներկա էին մեր ապագա հոգեբանները»,-ասել է մեթոդիստ և պահեստազորի փոխգնդապետ Սերգեյ Ոսկանյանը:

# ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ



*Փետրվարի 21-ը նշվում է որպես մայրենի լեզվի միջազգային օր: ԱրՊՀ- ում օրը նշանավորվեց միջոցառմամբ, որը նախաձեռնել էր բանասիրական ֆակուլտետի ակադեմիկոս Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնը: Ողջունելով ներկաներին և շնորհավորելով տոնի առթիվ՝ ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ Հասմիկ Ղազարյանը կարևորել է օրվա խորհուրդը:*

«Մեր լեզուն լուսե կանթեղ է, որը մեզ ուղեկցել և ուղեկցում է դեպի հավերժություն, լուսավորում է մեր ժողովրդի ճանապարհը և ժամանակի հորձանուտում հային պահում հայ: Ժողովրդին կործանումից փրկող, միավորող, գալիք օրհասների դեմ նրան զինող, նրա հարատևումն ապահովող միակ, պարզ ու հասարակ թվացող բանը՝ հայոց տառերը՝ հայոց գիրը, ուժեղ դուրս եկավ հայ ժողովրդի ունեցած բոլոր զենքերից»,-նշել է նա:

Միջոցառման ընթացքում ուսանողները մայրենի լեզվին ձոնված բանաստեղծություններ են ասմունքել, ելույթներում կարևորել մայրենի լեզվի դերը ազգային ինքնությունն ու դիմագիծը պահպանելու գործում:

«Յուրաքանչյուր ժողովրդի կյանքում կան սրբություններ, որոնք կարող են լինել նման կամ տարբեր, սակայն մայրենին՝ իբրև սրբություն, ընդհանուր է բոլորի համար», - ասել է ուսանողուհի Էդիտա Ալթունյանը:

Մայրենի լեզվի միջազգային օրվա առթիվ ակադեմիկոս Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնը հայտարարել էր «Լավագույն ստեղծագործող» և «Լավագույն ասմունքող» մրցույթը: «Լավագույն ասմունքող» անվանակարգում 1-ին տեղն է զբաղեցրել Անժելա Սահակյանը, 2-րդ տեղը՝ Լիլիթ Մարգարյանը, 3-րդ տեղը՝ Մարիամ Ասրյանը: «Լավագույն ստեղծագործող» անվանակարգում 1-ին տեղն է զբաղեցրել Հերմինե Արզումանյանը, 2-րդ տեղը՝ Լուսինե Օհանջանյանը, 3-րդ տեղը՝ Աննա Մուսայելյանը:

Մրցույթներում հաղթողները ամբիոնի կողմից պարգևատրվել են պատվոգրերով, իսկ մյուս մասնակիցները՝ գրքերով:Հիշեցնենք, որ 1999 թվականի նոյեմբերի 17-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ն որոշում ընդունեց ստեղծել մայրենի լեզվի միջազգային օր: Իսկ 2000 թվականի փետրվարի 21-ից ամբողջ աշխարհը սկսեց տոնել մայրենի լեզվի միջազգային օրը:

# ՍՈՒՄԳԱՅԻԹՅԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՉՈՒՆԻ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ

*Այս օրերին խոնարհումի և ոգեկոչման արարողություններ են տեղի ունենում՝ ի հիշատակ սումգայիթյան անմեղ զոհերի: Փետրվարի 28-ին ՄԵՀԶ նախարարության և ԱրՊՀ համատեղ նախաձեռնությամբ Ստեփանակերտի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնում կազմակերպվել է միջոցառում, որի ընթացքում հնչել են ելույթներ և ցուցադրվել «Սովորական ցեղասպանություն» ֆիլմը: Միջոցառմանը մասնակցում էին ԱրՊՀ դասախոսներ և ուսանողներ:*

Բացման խոսքով հանդես է եկել ԱրՊՀ ՈՒՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը, ով, խոսելով Սումգայիթում հայերի զանգվածային տեղահանության և բնաջնջման քաղաքականության մասին, ասել է. «Սումգայիթում տեղի ունեցածը, իրավամբ, պետք է համարել ցեղասպանություն, որովհետև հայերին թալանում, սպանում էին միայն նրանց ազգային պատկանելության համար: Հայ ազգի դեմ իրականացրած հանցագործության նպատակն էր կանխել Արցախյան շարժումը՝ ահաբեկելով նոր արյունահեղ գործողությունների հեռանկարով»:

ԱրՊՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի դեկան, պ.գ.թ., դոցենտ Արմինե Խաչատրյանը նշել է, որ Ադրբեջանը, ի պատասխան արցախահայության արդարացի պահանջի՝ խաղաղ ճանապարհով լուծելու ինքնորոշման հարցը, կիրառեց բիրտ քաղաքականություն, որից մեկն էլ Սումգայիթի արյունալի դեպքերն են:

ԱրՊՀ լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Զարինե Սառաջյանը, ով այդ ջարդերի ականատեսն է, ներկաներին պատմել է իր հիշողություններից. «Ես այդ ժամանակ 4 տարեկան երեխա էի: Ապրում էինք «եղբայրական» Ադրբեջանում՝ շրջապատված ադրբեջանցիներով: Այդ արյունալի իրադարձությունների հետևանքում ես և այնտեղ ապրող իմ հայ հասակակիցներն ունեցանք խեղված մանկություն: Հիշում եմ, որ օրերից մի օր մայրս բոլորիս արգելեց բակ իջնել, ընդհատվեցին բոլոր խաղերը: Աշխույժ զրույցներն ու ծիծաղը մեր տանը փոխարինվեցին վախեցած շշուկների և լացի: Գազազած ադրբեջանական ամբոխը թմրանյութերի ազդեցության տակ վխտում էր փողոցում՝ գոռալով, սուլոցներով, հայ էին փնտրում՝ հոշոտելու, ողջակիզելու»:

ԱրՊՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի պատմության ամբիոնի դասախոս, դոցենտի պաշտոնակատար Արևիկ Պետրոսյանն ընդգծել է. «Սումգայիթյան ջարդերը իրականություն դարձան, որովհետև 1915թ. Հայոց ցեղասպանությունը մնաց անպատիժ, և հայ ժողովուրդը ի վիճակի չէր նույն ձևով նրանց պատասխան տալու: Մեր ճակատագրի տնօրինողը և մեր անվտանգությունն ապահովողը մենք ենք: Սահմանին կանգնած զինվորն է այն երաշխավորը, որ հայ ժողովուրդը այլևս չի ենթարկվի նման սպանդի»:



# ԱրՊՀ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵՆ ԲՈՒՀ-ԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆԸ




*ՀՀ Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը (ՈԱԱԿ) հունվարի 22-ից 25-ը կազմակերպել է բարձրագույն ուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագետների վերապատրաստում՝ փորձագիտական բազայում գրանցված մասնագետների համար: ԱրՊՀ-ից վերապատրաստմանը մասնակցել են ԱրՊՀ որակի ապահովման կենտրոնի վարիչ Հասմիկ Մինասյանը և գիտության, ասպիրանտուրայի և միջազգային համագործակցության բաժնի մասնագետ Նանա Առուստամյանը:*

Դասընթացի նպատակն էր փորձագետներին նախապատրաստել, որպեսզի կարողանան բուհերի հավատարմագրման ընթացքում ապահովել հիմնավորված, անկախ և անկողմնակալ փորձագիտական գնահատում:

Վերապատրաստման ընթացքում ՈԱԱԿ մասնագետները տեսական ու գործնական առաջադրանքների միջոցով անդրադարձել են «Հավատարմագրման գործընթաց, փորձագիտական աշխատանքի առանձնահատկությունները», «Ինստիտուցիոնալ ինքնավերլուծության նախնական գնահատում: Փորձագիտական այց», «Փորձագիտական նախնական զեկույցի նախապատրաստում»: Վերապատրաստվող մասնագետները հանդիպում են ունեցել նաև հավատարմագրման գործընթացների մասնակցած փորձագետների հետ:

Ինչպես նշում է վերապատրաստմանը մասնակցած Նանա Առուստամյանը, վերապատրաստման արդյունքում ծանոթացել են հավատարմագրման գործընթացին և փորձագիտական աշխատանքի առանձնահատկություններին, սովորել փորձագետի տեսանկյունից գնահատել բուհի համապատասխանությունը հավատարմագրման չափանիշներին:

Որակի ապահովման կենտրոնի վարիչ Հասմիկ Մինասյանը բարձր է գնահատել վերապատրաստման արդյունավետությունը՝ նշելով ՈԱԱԿ փորձագետների ցուցաբերած մասնագիտական աջակցության կարևորությունն ու անհրաժեշտությունը՝ հավատարմագրման գործընթացում:

# ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԱԱԿ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ Է ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ



*Փետրվարի 20-ին ՀՀ Մասնագիտական կրթության ՈԱԱԿ կողմից մեկնարկել է վերապատրաստման եռօրյա դասընթաց՝ «Որակի ապահովման համակարգի ներդնում և զարգացում: Ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծություն» թեմայով, որին ԱրՊՀ-ից մասնակցել են Որակի ապահովման կենտրոնի վարիչ Հասմիկ Մինասյանն ու բանասիրական ֆակուլտետի դեկան Լուսինե Մարգարյանը:*

Վերապատրաստման նպատակն էր շահակիցներին տրամադրել անհրաժեշտ մեթոդաբանություն որակի ապահովման ներքին համակարգ ներդնելու և ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծություն իրականացնելու համար:

Եռօրյա դասընթացների արդյունավետությունը բարձր են գնահատել մասնակիցները՝ կարևորելով նման դասընթացների դերն ու անհրաժեշտությունը: